ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 122 - Ա

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 10-րդ և 50-րդ կետերի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայտարարել Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթներ՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝

1) Հրապարակել Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթներ անցկացնելու մասին հայտարարությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի N1 ձևի:

2) Ապահովել հայտարարությունների հրապարակումն և մրցույթների անցկացման ընթացակարգերը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2026-05-12 17:10:16 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2026թ. մայիսի 12

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2026թ. մայիսի 12 -ի
N 122 -Ա որոշման

Տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթների հրապարակման ենթակա Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ,
2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Արինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,
3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գողթանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ,
4. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ,
5. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ: